Հավելված 7
«ՀՖԿՍՊԻ-ԳՀԱՊՁԲ 18/2» ծածկագրով
գնանշման հարցման հրավերի

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԳՐԵՆԱԿԱՆ ՊԻՏՈՒՅՔՆԵՐԻ ԵՎ ԳՐԱՍԵՆՅԱԿԱՅԻՆ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N ՀՖԿՍՊԻ-ԳՀԱՊՁԲ 18/2-1

ք. Երևան «25» մայիսի 2018թ.

<< Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ >> հիմնադրամն, ի դեմս Վահրամ Առաքելյանի, որը գործում է <<ինստիտուտի կանոնադրության>> հիման վրա, այսուհետ՝ <<Գնորդ>>, մի կողմից, և <<Սմարթլայն>> ՍՊԸ -ն, ի դեմս տնօրեն Տիգրան Ղարիբյանի, ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի,

2.1.8 Ձնել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է 2027500 /երկու միլիոն քսանյոթ հազար հինգ հարյուր/ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով

Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.2 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված պպրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով[1]:

---

[1] *Պայմանագիրը «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա կնքված լինելու դեպքում տուգանքը հաշվարկվում է պայմանագրի գնի այն մասի նկատմամբ, որի համար տվյալ տարվա ընթացքում հատկացվել են ֆինանսական միջոցներ և կնքվել է համաձայնագիր:*

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը[2]:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի

---

[2] *Պետական բյուջեի միջոցների հաշվին պարտավորություններ չառաջացնող գնումների դեպքում սույն նախադասությունը պայմանագրից հանվում է:*

մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողությունները) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Պայմանագիրը կազմված է 5 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
ՀՖԿՄՊՒիմնադրամ	«Սմարթլայն» ՍՊԸ
ք. Երևան , Ա.Մանուկյան-11	ք.Երևան, Վարդանանց 110
Հայէկոնոմբանկ,Մյասնիկյան մ/ճ	«Հայէկոնոմբանկ» ԲԲԸ
Հ/Հ 163038103145,ՀՎՀՀ 01505821	Հ/Հ 163007031509
Ռեկտոր Վ.Բ.Առաքելյան	ՀՎՀՀ 01548908
-------------------------------	Տ. Ղարիբյան ------------------------
/ստորագրություն/	(ստորագրություն)
Կ.Տ	Կ.Տ

Անհրաժեշտության դեպքում պայմանագրում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:

Հավելված N 1
« 25» մայիսի 2018թ. կնքված
ՀՖԿՍՊԻ-ԳՀԱՊՁԲ 18/2 *ծածկագրով պայմանագրի*

«ԳՐԵՆԱԿԱՆ ՊԻՏՈՒՅՔՆԵՐԻ ԵՎ ԳՐԱՍԵՆՅԱԿԱՅԻՆ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ» ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ապրանքի									մատակարարման		
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը և ապրանքային նշանը	արտադրողը և ծագման երկիրը	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	միավոր գինը /ՀՀ դրամ	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	Ընդհանուր քանակը	հասցեն	ենթակա քանակը	Ժամկետը**
1	30197332	Դակիչ		Ծակոտիչ գրասենյակային՝ մինչև 25-36 թերթ դակելու համար:	հատ	1100	5500	5	0070, ք.Երևան,Ալ. Մանուկյան11	5	Պայմանա գիրը ուժի մեջ մտնելու օրվանից 20 օրվա ընթացքում
2	30192160/1	Ջնջիչ-գրիչ		Ջնջիչ-գրիչ Correction Pen, 20ml	հատ	225	6750	30	0070, ք.Երևան,Ալ. Մանուկյան11	30	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից երկրորդ և երրորդ եռամսյակներին
3	30192160/2	Ջնջիչ/շտրիխ/		Retype 20ml	հատ	235	35250	150	0070, ք.Երևան,Ալ. Մանուկյան11	150	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից երկրորդ և երրորդ եռամսյակներին
4	30197120	Կոճգամ		Մետաղյա, սովորական,մետաղյա տուփի մեջ,100հատ	տուփ	130	1950	15	0070, ք.Երևան,Ալ. Մանուկյան11	15	Պայմանա գիրը ուժի մեջ մտնելու օրվանից 20 օրվա ընթացքում
5	30192100	Ռետին		Ռետին՝ բարձր որակի,նախատեսված մատիտով գրածները մաքրելու համար: 40մմ,փափուկ	հատ	55	8250	150	0070, ք.Երևան,Ալ. Մանուկյան11	150	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից երկրորդ և չորրորդ եռամսյակներին
6	39263200	Գր.գիրք,70-200էջ,տողանի,սպիտակ		Թղթե գրանցամատյաններ, Ստվարաթղթե կազմով երկարատև պահման գործերի համար, մատյան, օֆսեթ 70-200էջ, տողանի, սպիտակ էջերով, կոշտ կազմով	հատ	650	16250	25	0070, ք.Երևան,Ալ. Մանուկյան11	25	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից երրորդ եռամսյակին
7	30195931	Գրատախտակ փոքր		Գրատախտակ՝ նախատեսված գծանշիչով ընդգծումներ, նշումներ անելու համար, մարկերով գրելու համար,90սմ*60սմ կախովի:	հատ	7500	15000	2	0070, ք.Երևան,Ալ. Մանուկյան11	2	Պայմանա գիրը ուժի մեջ մտնելու օրվանից 20 օրվա ընթացքում
8	30195931	Գրատախտակ մեծ		Գրատախտակ՝ նախատեսված գծանշիչով ընդգծումներ, նշումներ անելու համար, մարկերով գրելու համար,90սմ*150սմ կախովի:	հատ	18000	36000	2	0070, ք.Երևան,Ալ. Մանուկյան11	2	Պայմանա գիրը ուժի մեջ մտնելու օրվանից 20 օրվա ընթացքում
9	30197220	Ամրակ 33սմ		Գրասենյակային ամրակներ, մետաղական 33մմ երկարությամբ, թղթի տրցակները ամրացնելու համար: Թղթի դարսը՝ լիարժեք ամրությամբ, միասնական պահելու	տուփ	105	6300	60	0070, ք.Երևան,Ալ. Մանուկյան11	60	Պայմանա գիրը ուժի մեջ մտնելու օրվանից 20 օրվա ընթացքում

				կարողությամբ:							
10	39263520	Սեղմակ 32 մմ		Սեղմակ, միջին, լայնությունը 32 մմ:	տուփ	275	2750	10	0070, ք.Երևան,Ալ. Մանուկ յան11	10	Պայմանա գիրը ուժի մեջ մտնելու օրվանից 20 օրվա ընթացքում
11	30197233	Թղթապանակ թելով		Ստվարաթղթից կազմեր երկարատև պահման գործերի համար, Բ տիպի, թելակապերով, ստվարաթղթի խտությունը՝ 1,15 գ/սմ3, հաստությունը 0,3-ից մինչև 1,5 մմ,կավճապատ ստվարաթղթից, թելով/հաստությունը 320գր.քառ.մ	հատ	65	13000	200	0070, ք.Երևան,Ալ. Մանուկ յան11	200	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից երրորդ եռամսյակին
12	30197230	Թղթապանակ կոճգամով		Թղթապանակ կոճգամով, A4 ձևաչափի թղթերի համար,թափանցիկ,գունավոր,պլաստիկե	հատ	80	12000	150	0070, ք.Երևան,Ալ. Մանուկ յան11	150	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից երրորդ եռամսյակին
13	30197230	Անկյունակ		Անկյունակ պլաստիկ,Ա4 ֆորմատի թղթերի համար	հատ	90	1800	20	0070, ք.Երևան,Ալ. Մանուկ յան11	20	Պայմանա գիրը ուժի մեջ մտնելու օրվանից 20 օրվա ընթացքում
14	30192121	Գրիչ		Գրիչ, գնդիկավոր, տարբեր գույների, տարբեր տեսակի կառուցվածքով: Գնդիկավոր 0.1 մմ հաստությամբ	հատ	78	93600	1200	0070, ք.Երևան,Ալ. Մանուկ յան11	1200	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից երկրորդ և երրորդ եռամսյակներին
15	30192130	Մատիտ		Մատիտ սրած, գրաֆիտե միջուկով, հասարակ , կարծրությունը 2HB	հատ	30	12000	400	0070, ք.Երևան,Ալ. Մանուկ յան11	400	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից երկրորդ և երրորդ եռամսյակներին
16	30192114	Թանաք կնիքի բարձիկի համար		Կնիքի թանաք 30մլ	հատ	115	1150	10	0070, ք.Երևան,Ալ. Մանուկ յան11	10	Պայմանա գիրը ուժի մեջ մտնելու օրվանից 20 օրվա ընթացքում
17	30192710	Սոսինձ չոր 15գր		Սոսինձ: Չոր սոսինձ՝ գրասենյակային (սոսնձամատիտ), թուղթ սոսնձելու համար, 22գր.քաշով	հատ	200	40000	200	0070, ք.Երևան,Ալ. Մանուկ յան11	200	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից երկրորդ և երրորդ եռամսյակներին
18	24911200	Սոսինձ Էմուլսիա 85գր		Սոսինձ պոլիվինիլացիտատային /Էմուլսիա/,NBA 85 գր,գրասենյակային	հատ	145	14500	100	0070, ք.Երևան,Ալ. Մանուկ յան11	100	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից երկրորդ և երրորդ եռամսյակներին
19	30192720	Գծանշիչ		Տարբեր գույնի՝ նախատեսված ընդգծումներ, նշումներ անելու համար, ֆետրից կամ այլ ծակոտկեն նյութից տափակ ծայրոցով:	հատ	175	17500	100	0070, ք.Երևան,Ալ. Մանուկ յան11	100	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից երկրորդ և երրորդ եռամսյակներին
20	30193110	Սեղանի հավաքածու		20կտոր,սև գույն,պտտվող,բարձր որակի	հատ	4650	46500	10	0070, ք.Երևան,Ալ. Մանուկ յան11	10	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից երկրորդ և երրորդ եռամսյակներին
21	39292120	Գրատախտակի ջնջիչ		Մարկեր.ով գրվող գրատախտակի մաքրիչ	հատ	365	29200	80	0070, ք.Երևան,Ալ. Մանուկ յան11	80	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից երկրորդ և երրորդ եռամսյակներին
22	30195911	Գրատախտակի մաքրող հեղուկ		Գրատախտակի մաքրող հեղուկ 150 մլ	հատ	900	18000	20	0070, ք.Երևան,Ալ. Մանուկ յան11	20	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից երկրորդ և երրորդ եռամսյակներին
23	30195911	Գրատախտակի մարկեր		Բարձր որակի, գրատախտակից հեշտ մաքրվող	հատ	170	51000	300	0070, ք.Երևան,Ալ. Մանուկ յան11	300	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից երկրորդ և երրորդ եռամսյակներին

24	30197231	Ֆայլ		A 4, 50mikron կամ համարժեքը,թափանցիկ պոլիմերային թաղանթ, A4 ձևաչափի թղթերի համար, արագակարներին ամրացնելու հնարավորությամբ:	հատ	9.8	39200	4000	0070, ք.Երևան,Ալ. Մանուկ յան11	4000	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից երկրորդ և չորրորդ եռամսյակներին
25	39241210	Մկրատ 17սմ		Մկրատ գրասենյակային, պողպատե մկրատ բարձր որակի, սուր ծայրով, պլաստմասե բռնակով, 17 սմ երկարությամբ:	հատ	275	13750	50	0070, ք.Երևան,Ալ. Մանուկ յան11	50	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից երրորդ եռամսյակին
26	39292510	Քանոն		Քանոն պլաստմասայե: Ուղիղ քանոն՝ գծաբաժանումներով, առավելագույն երկարությունը 30 սմ:	հատ	65	6500	100	0070, ք.Երևան,Ալ. Մանուկ յան11	100	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից երկրորդ և երրորդ եռամսյակներին
27	30197322	Կարիչ 24/6		Գրասենյակային կարիչ, մինչև 20 թերթ մետաղալարե կապերով ամրացնելու համար	հատ	1000	40000	40	0070, ք.Երևան,Ալ. Մանուկ յան11	40	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից երկրորդ և երրորդ եռամսյակներին
28	30197111	Կարիչի ամրացնող մետաղ փ		Կարիչի մետաղալարե կապեր, փոքր: Գրասենյակային կարիչների մետաղալարե կապեր բլոկներով՝ 10 մմ:	հատ	85	4250	50	0070, ք.Երևան,Ալ. Մանուկ յան11	50	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից երրորդ եռամսյակին
29	30141100	Հաշվիչ մեքենա,12նիշ		Հաշվասարք, գրասենյակային: 12 նիշանի սեղանի 18X13.5 սմ չափերով, գործողությունները ցուցադրումով վահանակի վրա ինքնալիցքավորվող	հատ	2500	37500	15	0070, ք.Երևան,Ալ. Մանուկ յան11	15	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից երկրորդ և երրորդ եռամսյակներին
31	30199420	Ինքնակպչ.թերթ.նշ. համար76*76,100հ		Թուղթ նշումների համար, կպչուն, 76.2x76.2մմ,100թերթ տուփում գունավոր , սոսնձվածքը 1,25 մմ-ից ոչ պակաս:	հատ	195	9750	50	0070, ք.Երևան,Ալ. Մանուկ յան11	50	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից երկրորդ և երրորդ եռամսյակներին
32	22851100	Արագակար		թղթապանակ, արագակար, թղթյա, արագակար կավճած ստվարաթղթից, մետաղական ամրակով, A4 (210x297) մմ ձևաչափի թերթերի համար:	հատ	63	12600	200	0070, ք.Երևան,Ալ. Մանուկ յան11	200	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից երկրորդ և երրորդ եռամսյակներին
33	22851300	Արագակար հաստ պլաստիկե ծակովի		Արագակար պլաստիկե, մետաղական ամրակով, A4 (210x297) մմ ձևաչափի թերթերի համար:	հատ	285	28500	100	0070, ք.Երևան,Ալ. Մանուկ յան11	100	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից երկրորդ և երրորդ եռամսյակներին
36	22851200	Թղթապանակ ֆայլերով 40հատ		Պլաստիկ տեսակի,40ֆայլով	հատ	430	30100	70	0070, ք.Երևան,Ալ. Մանուկ յան11	70	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից երկրորդ և երրորդ եռամսյակներին
37	30197235	Թղթապանակ ռեգիստր փոքր		Թղթապանակ կոշտ ստվարաթղթե կազմով, համապատասխան չափի կոնակով (ծավալով), մետաղյա ամրացման հարմարանքով, A4 (210x297) մմ ձևաչափի թղթերի համար,4սմ	հատ	580	11600	20	0070, ք.Երևան,Ալ. Մանուկ յան11	20	Պայմանա գիրը ուժի մեջ մտնելու օրվանից 20 օրվա ընթացքում
38	30199232	Ծրար Ա4		ծրար, մեծ, A4 ձևաչափի համար: Ծրար՝ A4 (210x297) մմ ձևաչափի, 90 % սպիտակության, 1 մ2 մակերեսը՝ 100 գ զանգվածով N1 օֆսեթային թղթից, ինքնասոսնձվող:	հատ	40	4000	100	0070, ք.Երևան,Ալ. Մանուկ յան11	100	Պայմանա գիրը ուժի մեջ մտնելու օրվանից 20 օրվա ընթացքում
40	30192220	Պոլիմեր.ինքնակպ. Ժապ.փոքր19մմ*36մ		19մմ*36մ,թափանցիկ,բարձր որակի/սկոչ/	հատ	60	3000	50	0070, ք.Երևան,Ալ. Մանուկ յան11	50	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից երկրորդ և երրորդ եռամսյակներին

41	30192210	Պոլիմեր.ինքնակպ. Ժապ.մեծ48*100երկ		48մմ*100մ,թափանցիկ,բարձր որակի/սկոչ/	հատ	435	17400	40	0070, ք.Երևան,Ալ. Մանուկ յան11	40	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից երկրորդ և երրորդ եռամսյակներին
42	30193700	Թղթադարակ		Թղթադարակ, հարկերով, պլաստմասե: Պլաստմասե, 3 նիստով, նախատեսված A4 (210 x 297) մմ ձևաչափի թերթերի համար:	հատ	1880	18800	10	0070, ք.Երևան,Ալ. Մանուկ յան11	10	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից երրորդ եռամսյակին
43	30197646	A-3		Օֆսեթային 80 գր. քառ.մ, բարձր որակի, սպիտակությունը 98% ոչ պակաս, Ա3 ձևաչափի, տուփում 500 թերթ, եվրոպական արտադրության,ուլտրա սպիտակ	հատ	4200	63000	15	0070, ք.Երևան,Ալ. Մանուկ յան11	15	Պայմանա գիրը ուժի մեջ մտնելու օրվանից 20 օրվա ընթացքում
44	30197621	Ֆլիպչարտի թուղթ		Ֆլիպչարտի թուղթ գրատախտակի համար,810մմ*585մմ,25թերթ	տուփ	2400	24000	10	0070, ք.Երևան,Ալ. Մանուկ յան11	10	Պայմանա գիրը ուժի մեջ մտնելու օրվանից 20 օրվա ընթացքում
45	22811150	ՆոթատետրՍ5,զսպ		Պարույրով A5 ֆորմատի, 70թերթ	հատ	190	3800	20	0070, ք.Երևան,Ալ. Մանուկ յան11	20	Պայմանա գիրը ուժի մեջ մտնելու օրվանից 20 օրվա ընթացքում
46	30199410	Ինքնակպչուն կազմ Ա3		Ինքնակպչուն կազմ Ա3,կազմի,ինքնակպչուն շերտով,թղթի 1ք.մ մակերեսի զանգվածը 100գր	տուփ	1050	10500	10	0070, ք.Երևան,Ալ. Մանուկ յան11	10	Պայմանա գիրը ուժի մեջ մտնելու օրվանից 20 օրվա ընթացքում
47	30192133	Սրիչ		Սրիչ գրաֆիտե մատիտի համար,բարձր որակի	հատ	90	4500	50	0070, ք.Երևան,Ալ. Մանուկ յան11	50	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից երկրորդ և երրորդ եռամսյակներին

48	30199270	Ծրար Ա5		նամակի ծրար, A5 ձևաչափի:Ծրարներ չթափանցող, եռանկյունաչափ փակվող, խիտ թղթից՝ նախատեսված գաղտնիություն պարունակող նամակների համար, սահմանված չափի և ձևի:	հատ	25	10000	400	0070, ք.Երևան,Ալ. Մանուկ յան11	400	Պայմանա գիրը ուժի մեջ մտնելու օրվանից 20 օրվա ընթացքում
49	30197622	A-4,Ա-դասի		Օֆսեթային 80 գր. քառ.մ, բարձր որակի, սպիտակությունը 98% ոչ պակաս, տուփում 500 թերթ, եվրոպական կամ ռուսական արտադրության,ուլտրա սպիտակ, A4 (210x297) մմ ձևաչափի, թելիկներ չպարունակող:	կգ	767	1150500	1500	0070, ք.Երևան,Ալ. Մանուկ յան11	1500	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից երկրորդ, երրորդ եռամսյակներին և դեկտեմբերին

**Ապրանքի մատակարարման ժամկետը, իսկ փուլային մատակարարման դեպքում՝ առաջին փուլի մատակարարման ժամկետը, պետք է սահմանվի առնվազն 20 օրացուցային օր, որի հաշվարկը կատարվում է պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրը, բացառությամբ այն դեպքի, երբ ընտրված մասնակիցը համաձայնում է ապրանքը մատակարարել ավելի կարճ ժամկետում: Մատակարարման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 15-ը:*

***Եթե հրավերով չի նախատեսվում առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից առաջարկվող ապրանքի՝ ապրանքային նշանի և արտադրողի անվանման վերաբերյալ տեղեկատվության ներկայացում, ապա «անվանումը և ապրանքային նշանը» սյունակից հանվում է «և ապրանքային նշանը», իսկ «արտադրողի անվանումը և ծագման երկիրը» սյունակից «արտադրողի անվանումը և» բառերը:*

****Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սյունակում ժամկետի հաշվարկն իրականացվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած:*

ԳՆՈՐԴ

<<ՀՖԿՍՊԻ>> հիմնադրամ
ք. Երևան, Ա.Մանուկյան-11
Հայէկոնոմբանկ,Այնմնիկյան մ/ճ
Հ/Հ 163038103145,ՀՎՀՀ 01505821
Ռեկտոր Վ.Բ.Մարքելյան

/ստորագրություն/
Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ

«Սմարթլայն» ՍՊԸ
ք.Երևան, Վարդանանց 110
«Հայէկոնոմբանկ» ԲԲԸ
Հ/Հ 163007031509
ՀՎՀՀ 01548908

Տ. Ղարիբյան ----------
(ստորագրություն)
Կ.Տ

Հավելված N 2
« 25» մայիսի 2018թ. կնքված
ՀՖԿՊԻ-ԳՀԱՊՁԲ 18/2 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ապրանքի															
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2018թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	30197332	Դակիչ						5500	5500	5500	5500	5500	5500	5500	5500
2	30192160	Ջնջիչ/շտրիխ/						3375	3375	3375	6750	6750	6750	6750	6750
3	30192161	Ջնջիչ-գրիչ						17625	17625	17625	35250	35250	35250	35250	35250
4	30197121	Կոճգամ						1950	1950	1950	1950	1950	1950	1950	1950
5	30192100	Ռետին						4125	4125	4125	8250	8250	8250	8250	8250
6	39263200	Գր.գիրք,70-200էջ,տողանի,սպիտակ									16250	16250	16250	16250	16250
7	30195931	Գրատախտակ փոքր						15000	15000	15000	15000	15000	15000	15000	15000
8	30195931	Գրատախտակ մեծ									36000	36000	36000	36000	36000
9	30197220	Ամրակ 33սմ						6300	6300	6300	6300	6300	6300	6300	6300
10	39263520	Սեղմակ 32 մմ						2750	2750	2750	2750	2750	2750	2750	2750
11	30197233	Թղթապանակ թելով									13000	13000	13000	13000	13000
12	30197230	Թղթապանակ կոճգամով									12000	12000	12000	12000	12000
13	30197230	Անկյունակ						1800	1800	1800	1800	1800	1800	1800	1800

14	30192121	Գրիչ						46800	46800	46800	93600	93600	93600	93600	93600
15	30192130	Մատիտ						6000	6000	6000	12000	12000	12000	12000	12000
16	30192114	Թանաք կնիքի բարձիկի համար						1150	1150	1150	1150	1150	1150	1150	1150
17	30192710	Սոսինձ չոր 15գր						20000	20000	20000	40000	40000	40000	40000	40000
18	24911200	Սոսինձ էմուլսիա 85գր						7250	7250	7250	14500	14500	14500	14500	14500
19	30192720	Գծանշիչ						8750	8750	8750	17500	17500	17500	17500	17500
20	30193110	Սեղանի հավաքածու						23250	23250	23250	46500	46500	46500	46500	46500
21	39292120	Գրատախտակի ջնջիչ						14600	14600	14600	29200	29200	29200	29200	29200
22	30195911	Գրատախտակի մաքրող հեղուկ						9000	9000	9000	18000	18000	18000	18000	18000
23	30195911	Գրատախտակի մարկեր						25500	25500	25500	51000	51000	51000	51000	51000
24	30197231	Ֆայլ						19600	19600	19600	39200	39200	39200	39200	39200
25	39241210	Մկրատ 17սմ									13750	13750	13750	13750	13750
26	39292510	Քանոն						3250	3250	3250	6500	6500	6500	6500	6500
27	30197322	Կարիչ 24/6						20000	20000	20000	40000	40000	40000	40000	40000
28	30197111	Կարիչի ամրացնող մետաղ փ									4250	4250	4250	4250	4250
29	30141100	Հաշվիչ մեքենա,12նիշ						12500	12500	12500	37500	37500	37500	37500	37500
31	30199420	Ինքնակպչ.թերթ.նշ.համար76*76,100հ						4875	4875	4875	9750	9750	9750	9750	9750
32	22851100	Արագակար						6300	6300	6300	12600	12600	12600	12600	12600
33	22851300	Արագակար հաստ պլաստիկե ծակովի						14250	14250	14250	28500	28500	28500	28500	28500
36	22851200	Թղթապանակ ֆայլերով 40հատ						15050	15050	15050	30100	30100	30100	30100	30100
37	30197235	Թղթապանակ ռեգիստր փոքր						11600	11600	11600	11600	11600	11600	11600	11600
38	30199232	Ծրար Ա4						4000	4000	4000	4000	4000	4000	4000	4000
40	30192220	Պոլիմեր.ինքնակպ. Ժապ.փոքր19մմ*36մ						1500	1500	1500	3000	3000	3000	3000	3000
41	30192210	Պոլիմեր.ինքնակպ. Ժապ.մեծ48*100երկ						8700	8700	8700	17400	17400	17400	17400	17400
42	30193700	Թղթսեղմակ									18800	18800	18800	18800	18800
43	30197646	A-3						47250	47250	47250	63000	63000	63000	63000	63000
44	30197621	Ֆլիպչարտի թուղթ						24000	24000	24000	24000	24000	24000	24000	24000

45	22811150	ՆոթատետրԱ5,զսպ						3800	3800	3800	3800	3800	3800	3800	3800
46	30199410	Ինքնակպչուն կազմ Ա3						10500	10500	10500	10500	10500	10500	10500	10500
47	30192760	Սրիչ						2250	2250	2250	4500	4500	4500	4500	4500
48	30199231	Ծրար Ա5						10000	10000	10000	10000	10000	10000	10000	10000
49	30197631	A-4,Ա-դասի						287625	287625	287625	862875	862875	862875	1150500	1150500

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են ամբողջական կարգով: Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սույն ժամանակացույցը լրացվում և կնքվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի հետ միաժամանակ՝ որպես դրա անբաժանելի մաս:*

*** հրավերում գումարները նշվում են տոկոսով, իսկ պայմանագիրը կնքելիս տոկոսի փոխարեն նշվում է կոնկրետ գումարի չափ*

ԳՆՈՐԴ

<<ՀՅԳԱՊԻ>> հիմնադրամ
ք. Երևան, Ա.Մանուկյան-11
Հայէկոնոմբանկ,Մյասնիկյան մ/ճ
Հ/Հ 163038103145,ՀՎՀՀ 01505821
Ռեկտոր Վ.Բ.Առաքելյան

(ստորագրություն)
Կ.Տ.

ՎԱՃԱՌՈՂ

«Սմարթլայն» ՍՊԸ
ք.Երևան, Վարդանանց 110
«Հայէկոնոմբանկ» ԲԲԸ
Հ/Հ 163007031509
ՀՎՀՀ 01548908

Տ. Ղարիբյան ----------
(ստորագրություն)
Կ.Տ

Հավելված N 3
« 25» մայիսի 2018 թ. կնքված
ՀՖԿՍՊԻ-ԳՀԱՊՁԲ 18/2 *ծածկագրով պայմանագրի*

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 2018թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ ԳՐԵՆԱԿԱՆ ՊԻՏՈՒՅՔՆԵՐԻ ԵՎ ԳՐԱՍԵՆՅԱԿԱՅԻՆ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՍԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ՀՖԿՍՊԻ-ԳՀԱՊՁԲ 18/2-1

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «23» «մայիսի» 2018 թ.
Պայմանագրի համարը՝ N ՀՖԿՍՊԻ-ԳՀԱՊՁԲ 18/2-1
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

N	Մատակարարված ապրանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց	Ապրանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
« 25» մայիսի 2018թ. կնքված
ՀՖԿՍՊԻ-ԳՀԱՊՁԲ 18/2 *ծածկագրով պայմանագրի*

ԱԿՏ N _____
պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Գնորդ) և _____
Գնորդի անվանումը Վաճառողի անվանումը
(այսուհետ՝ Վաճառող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
պայմանագրի շրջանակներում Վաճառողը 2018 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

Ապրանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց	Ընդունեց
	հայտը նախագծած ներկայացուցիչ՝
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
_____	_____
Ստորագրություն	ստորագրություն